ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Գ. Լուսավորչի փ., 12,
հեռ՝ (0264) 2-34-23, էլ. փոստ՝ info@gavarihamaynqapetaran.am

N Թ-2929
09 հոկտեմբեր 2025թ.

«ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Գ. ԵՍԱՅԱՆԻՆ

(ք. Երևան Վ. Համբարձումյան 91, ciacangnumner@gmail.com, **հեռ.**՝ +37410323324)

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Գավառի համայնքապետարանի այսուհետ /Պատվիրատու/ և «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի /այսուհետ՝ Ընկերություն/ միջև 12.09.2025թ. կնքվել է ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/23 ծածկագրով Գավառի համայնքապետարանի կարիքների համար ապրանքի մատակարարման գնման պայմանագիր, որի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված N1 /թեյ/, N14 /տաքդեղ/, N56 /կերակրի սոդա/ և N74 /խտացրած կաթ/ չափաբաժիններով նշված ապրանքները /այսուհետ՝ ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

Համաձայն 06.10.2025 թվականի «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի կողմից ստացված գրության, Ընկերությունը հրաժարվում է մատակարարել պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրով պահանջված N1 /թեյ/, N14 /տաքդեղ/, N56 /կերակրի սոդա/ և N74 /խտացրած կաթ/ չափաբաժիններով նշված ապրանքները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ /կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ/ կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայամանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը հրաժարվում է մատակարարել պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրով պահանջված ապրանքները և հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասը **Պատվիրատուն որոշեց՝ միակողմանի կարգով լուծում է 12.09.2025 թվականին ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/23 ծածկագրով կնքված պայմանագիրը**:

Միաժամանակ Պատվիրատուն Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշման 31-րդ հոդվածի 18-րդ կետի դ) ենթակետի դրույթներով՝ չի կայացնում մասնակցին **գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որոշում, քանի որ մասնակիցը** 02.10.2025 թվականիթիվԱ 11364 վճարման հանձնարարականով կատարել է պայմանագրի ապահովման և որակավորման ապահովման **24,632.50 (քսանչորս հազար վեց հարյուր երեսուներկու ամբողջ հիսուն) ՀՀ դրամ** տույժերի վճարում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Կատ. Գավառի համայնքապետարանի աշխատակազմի
ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման ու հավաքագրման
բաժնի առաջատար մասնագետ
Ս. Թամամավեյան
+37477879956